«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 07.09.2017թ. ժամը 17:10

Համաձայն 23.08.2017թ. թիվ 10/15/14976-17 գրությամբ՝ՀՀ Արդարադատության Նախարարությունից վերահսկելիագրված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝02.08.2017թ-ին «Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի պահանջատերեր՝Ռուբեն Մկրտչյանից և Մարտին Ղարիբյանից ստացված դիմումը «Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Սեպտեմբերի 07-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
«Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի պահանջատեր՝Ռուբեն Մկրտչյանը
«Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի պահանջատեր՝Մարտին Ղարիբյանը
«Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ասատրյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
«Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ասատրյանը

Դիմումատուներ՝ «Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի պահանջատերեր՝Ռուբեն Մկրտչյանը և Մարտին Ղարիբյանը պատշաճ ծանուցված և տեղյակ լինելով հանձնաժողովի նիստի,տեղի և ժամանակի մասին,նիստին չեն ներկայացել,չեն ներկայացրել նաև գրավոր առարկություններ կամ դիմումին կից լրացուցիչ փաստաթղթեր, ուստի նիստը անցկացվեց առանց դիմումատուների:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

ՀՀ Արդարադատության Նախարարությունից վերահսկելիագրված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝ 02.08.2017թ-ին «Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի պահանջատերեր՝Ռուբեն Մկրտչյանի և Մարտին Ղարիբյանի դիմումի հիմքով՝«Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանի, գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, «Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի պահանջատերեր՝Ռուբեն Մկրտչյանի և Մարտին Ղարիբյանի դիմումը «Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերը և խնդրեց հայտնել կարծիք առանց դիմումատուների հանձնաժողովի նիստը շարունակելու վերաբերյալ:

Հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և հայտնեցին կարծիք,որ դիմումատուները պատշաճ ծանուցված են եղել հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ և նրանց բացակայությունը կարելի է դիտել հանձնաժողովին,բացի իրենց գրած դիմումին,այլ փաստեր չլինելու հանգամանք և ավելացնելու բան չունենալու ապացույց,ուստի նրանց բացակայությունը կարելի է ընդունել որպես իրենց կարծիքը արտահայտող դիրքորոշում,ուստի բոլորը միակարծիք էին,որ նիստը կարելի է անցկացնել դիմումատուների բացակայությամբ:

Հանձնաժողովի նախագահն կարծիք հարցրեց նաև «Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանից,առանց դիմումատուների նիստը անցկացնելու վերաբերյալ:Կառավարիչը հայտնեց այն կարծիքը,որ գերադասելի էր,որ դիմումատուները ներկա գտնվեին և անձամբ հայտնեին իրենց կարծիքը կառավարչի աշխատանքի վերաբերյալ, բայց իր կարծիքով նրանք արդեն բավարված են կառավարչի գործողություններից և դիմում նշվածից բացի այլ բան չունեն հայտնելու հանձնաժողովին և եթե նրանց բացակայությունը չի խանգարում հանձնաժողովի անդամներին եզրակացության գալու համար,ուստի իրենը նույնպես չի առարկում հանձնաժողովի նիստը առանց դիմումատուների անցկացնելու կարծիքին:

ԼՍԵՑԻՆ՝

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և առաջարկեց հանջնաժողովի անդամներին քննարկել «Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ասատրյանի նկատմամբ «ԿՀ գործունեության և ՍԳԿ-ի կարգապահական վարույթի իրականացման»Կարգի 1.4 կետի հիմքով,կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվեարկության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՀՀ Արդարադատության Նախարարությունից վերահսկելագրված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝ 02.08.2017թ-ին «Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի պահանջատերեր՝Ռուբեն Մկրտչյանի և Մարտին Ղարիբյանի դիմումի հիմքով՝«Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված դիմումը և ներկայացված փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել դիմումում մեջ նշված հանգամանքները, «Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Աղամյանը,առաջարկեց լսել ներկա գտնվող «Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի բացատրությունները և ուսումնասիրել նրա ներկայացրած փաստարկները:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնը տվեց, «Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանին,ով մասնավորապես նշեց,որ «Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերությունը,Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճռով ճանաչվել է սնանկ,նույն դատարանի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել՝Կարեն Ասատրյանը,որից անմիջապես հետո սնանկության գործով կառավարիչը ձեռնամուխ է եղել իր պարտականությունների և

լիազորությունների կատարմանը,որի հետևանքով պարտատերերի պահանջների գրանցամատյանում գրանցվել են պահանջ ներկայացրած բոլոր պարարտերերը այդ թվում նաև դիմումատուները:Սահմանված ժամկետներում կազմվել է պարտատերերի պահանջների նախնական ցուցակը տպելով նրա մասին հայտարարություններ թերթում և ԱԶԴԱՐԱՐ ամ,ինտերնետային կայքում ներկայացվել է դատարանին և պարտատերերին քննարկելու և հաստատելու:Օրենքով սահմանված կարգով դատարանի կողմից հաստատվել է պարտատերերի վերջնական ցուցակը,որի վճարման /Գ/ հերթում գրանցված են նաև դիմումատուները և իր կողմից այդ պահանջների գծով առարկություններ չեն եղել:Պարտատերերի պահանջների բավարարման նպատակով ընկերության սնանկության վարույթի ընթացքում գույքագրվել,գնահատվել և իրացման է ներկայացվել ընկերությանը պատկանող գույքը այդ թվում նաև անշարժ գույքը,որի մասնակի իրացումից էլ առաջացած գումարները միջանկյալ բաշխում կատարելու համար կազմել եմ բաշխման ծրագիր և ներկայացնելով պարտատերերին և պարտապանին հանձնել եմ դատարան հաստատման համար:Միջանկյալ բաշխման ծրագիրը իր մեջ ներառում է միայն /Գ/ հերթի պահանջատերերի պահանջների մասնակի բավարարում,համամասնության կարգով,այդ թվում նաև դիմումատուներին:Բաշխման ծրագրի հաստատումից հետո անհապաղ սկսվել է կատարվել բաշխումները այդ թվում նաև դիմումատուներ՝ Ռուբեն Մկրտչյանին և Մարտին Ղարիբյանին,որոնք 04.09.2017թ-ին առձեռն ընկերության դրամարկղից ստացել են համապատասխանաբար՝150183 ՀՀ դրամ և 205727 ՀՀ դրամ,ըստ որի բավարարվել է նրանց պահանջը մասնակիորեն:Քանի որ այս պահին ընթանում են գույքի հրապարակային սակարկություններ,ուստի ինքը հուսով է,որ գույքի իրացման դեպքում /Գ/ հերթի բոլոր պահանջները կբավարարվեն ըստ օրենքի,իսկ ժամկետների վերաբերյալ ինքը կարծիք հայտնել չի կարող:

Հանձնաժողովի անդամ՝Մ.Մարտիկյանը հարց ուղղեց կառավարչի թե դիմումատուները երբևե դիմել են իրեն պահանջի բավարարման հարցերով և եթե դիմել են ապա ինչ կարգով:

Կառավարիչը պատասխանեց.որ նման հարցադրումները կատարվել և կատարվում են մշտապես,ամեն օր և օրվա տարբեր ժամերին,կատարվում են իր նստելավայր այցելությունների կամ հեռախոսազանգերի միջոցով,իսկ դիմումատուները մի քանի անգամ առանձին առանձին զանգահարել են և տեղեկացել և գիտեին սպասվելիք գումարների և բաշխումների մասին,բայց դժգոհել են համամասնության կարգից,որի հետևանքով իրենք իրենց ամբողջ գումարը չեին կարող ստանալ,այլ կստանան մասնակի և նորից պիտի սպասեին մինչև մյուս բաշխումները:

Իր կարծիքով սույն դիմումի հիմքում ընկած է հենց այդ դժգոհությունը:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը հարց ուղղեց կառավարչին թե արդյոք կառավարչի կողմից բացատրվել է պարտապանին «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 5-ր մասի պահանջները և ընդհանրապես սնանկության վարույթի ընդհանուր դրույթները:

Կառավարիչը պատասխանեց որ իր կողմից բացատրվել է պարտատերերին,որ գումարը անբավավար լինելու պատճառով և բոլոր այդ խմբի պարտատերերին հասնելու համար բաշխումը պետք է կատարվի համամսնության եղանակով:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը ,մասնավորապես հանձնաժողովի անդամ Հ.Մարտիկյանը հայտնեց այն կարծիքը,որ ներկայացված դիմումում նշված փաստերի և կառավարչի կողմից ներկայացված բացատրությունների և կից փաստաթղթերի համադրումից պարզ է որ դիմումատուները տեղյակ է սնանկության վարույթից,կառավարչի իրավունքներից և պարտականություններից և իրենց կարծիքով գումարների առկայության պարագայում,փորձում են կառավարչի գործողություններից բողոքելով ստիպել կառավարչին խախտելով կարգը իրենց աշխատավարձի պահանջը բավարարել ամբողջությամբ,առանց մյուսների պահանջների բավարարման իրավունքը հաշվի առնելով:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը համաձայնեց արտահայտած կարծիքին և ավելացրեց,որ սնանկության վարույթում «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 5-րդ մասը կարգավորում է այդ հերթում վճարվող աշխատավարձերի պահանջների բավարարման ձևերը և կառավարչի գործողությունները հիմնավորված են այդ հոդվածի հիմքով,այսինքն իրավաչափ են և կատարվել են օրենքով սահմանված իր լիազորությունների իրականացման շրջանակներում:

Ինչ վերաբերվում է կառավարչի գործողություններին կամ անգործության մեղադրանքներին ապա դրանք մտածածին են և չեն կարող համապատասխանել իրականությանը,քանի որ կառավարչի ներկայացրած միջանկյալ բաշխման ծրագրից և վճարման փաստաթղթերից ակնհայտ է,որ պարտատերերի նշած փաստերը անհիմն են և սին,ու մինչև բաշխումը կառավարչի վերաբերյալ բողոք ներկայացնելը հետապնդել է միայն իրենց աշխատավարձի պահանջը ամբողջությամբ և առանց հերթի ստանալու նպատակ:

Այսինք ՍԳ կառավարիչ՝Կ.Ասատրյանի գործողությունները կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ,56-րդ,76-րդ,80-րդ և 82-րդ հոդվածների կարգով և բխել են նույն օրենքի 82-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 80-րդ հոդվածի 1-ին մասով իրեն վերապահված լիազորություններով,իսկ փաստական հանգամանքները ուսումնասիրությունից հետո պարզ է,որ հարուցված կարգապահական վարույթ անհրաժեշտ է կարճել,ՍԳ կառավարիչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝
1. 23.08.2017թ. թիվ 10/15/14976-17 գրությամբ՝ ՀՀ Արդարադատության Նախարարությունից վերահսկելագրված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝ 02.08.2017թ-ին «Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի պահանջատերեր՝ Ռուբեն Մկրտչյանի և Մարտին Ղարիբյանի դիմումի հիմքով՝«Գլենդել Հիլզ»ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/, սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել,քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ,56-րդ,76-րդ,80-րդ և 82-րդ հոդվածների կարգով ու բխել են նույն օրենքի 82-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 80-րդ հոդվածի 1-ին մասով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:
2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան